ինչպէ՞ս գործադրեմ Նախիջևանին յատկացած գումարները: Նախիջևանսկին հարկադրուած է վերադառնալ: Անգլիացիք գրաւեցին Մակինսկի վագոնը»:

Ու երեք օր յետոյ, մայիս 4-ին, իրար յետևից քաշում է 2 հեռագիր: առաջինով հաղորդում է. «Հայկական գնդերը ուղևորուեցին դէպի Նախիջևան: Հայաստանի վրա ճնշում գործ դնելու համար անհրաժեշտ եմ գտնում, որ անյապաղ հայկական սահմանների վրա կենտրոնացուեն մեր գնդերը: Նախիջևանի աղդաբնակութիւնը պատրաստ է ցոյց տալու դիմադրութիւն... Դիլիջանում կանգնած է միայն 4-րդ գունդը՝ թերի կազմով»: Երկրորդ հեռագրով խնդրում է. «Շտապ պատասխանեցէ՛ք 29 ապր. № 72 հեռագրիս: Նախիջևանցիները ինձ հարցնում են՝ ինչպէ՞ս վարուել, և արդեօք Ազրբէջանը օգնութեան կը դա՞յ, եթէ իրենք հայերին դիմադրութիւն ցոյց տան»:

Մայիս 5-ին Բագուի կառավարութիւնը պաղ ջուր է լեցնում Խան Թեքինսկիի գլխին. արտ. գործ. նախ. պաշտօնակատար Զիմթխանովը հեռագրում է. «Դէպի Նախիջևան զօրամասեր և կամաւորներ ուղարկելու մասին ներկայումս խօսք լինել չի կարող. այդ հարցը եռանդուն կերպով քննւում է կառավարութեան և (խորհրդարանի) ազգերի խորհրդի մէջ: Հետևանքը կը հաղորդեմ: Եռանդագին բողոքեցէք Նախիջևանը գրաւելու նպատակով ձեռնարկուող ամէն տեսակ գործողութիւնների և Ազրբէջանի ինքնիշխան իրաւունքների նսեմացման դէմ»:

Իսկ մի օր յետոյ, մայիս 5-ին, վարչապետ Խան Խոյսկին հրամայում է. «Անյապաղ կապ հաստատեցէք Կարսի կառավարութեան հետ: Ցոյց տուէք նրան ամէն տեսակ աջակցութիւն. իմացէ՛ք, թէ ի՞նչ կարիք ունի. հեռագրեցէք մեզ, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք»:

Թեքինսկին Նախիջևան է ուղարկում իր զինուորական կցորդին ու գործավարին, որ ոտքի հանեն մահմեդականներին: Եւ մայիս 9-ին հեռագրում է. «Մինչև ապր. 27-ը զինուորական կցորդն ու գործավարը պէտք է Նախիջևան լինէին, բայց նրանցից դեռ տեղեկութիւն չի ստացած»:

Մայիս 12-ին Թեքինսկին դրամ և իր ոռճիկն է պահանջում վրդովուած. «Ես պարտական չեմ առանց ոռճիկի ծառայելու և ստանալու աւելի քիչ, քան միւս դիւանագիտական ներկայացուցիչները: Գործի օգուտը նկատի առնելով՝ չպէտք է սահմանափակէք իմ ծախքերը: Եթէ իմ ծախքերը մեծ էք համարում, խնդրում եմ ինձ յետ կանչէք և փոխարինէք ուրիշով, մանաւանդ որ ես Խոյսկիի հետ պայմանաւորուել եմ Երևանում մի ամսից աւելի չմնալ»:

Մարդը եկել էր մի տմսում Հայաստանը տակն ու վրա անելու և հեռանալու:

Թեքինսկիի պնդումների վրա Բագուի կառավարութիւնը մայիս 18-ին նորից պատասխանում է, որ «հանգամանքների բարդացման հետևանքով՝ *) Նախիջևանցիները մօտ ապագայում չեն կարող մեզանից ստանալ զինուորական իրական օգնութիւն. եթէ տեղական բնակչութիւնը կարող է կանգնեցնել հայկական զօրքերի յառաջխաղացումը, այդ ուրախութեամբ կընդունի Ազրբէջանի կողմից, մանաւանդ որ Ղարաբաղի հայերը, հակառակ մեզ աջակցելու համար Ղարաբաղ եկած անգլիացիների ներկայութեան, կորակնատէս ընդդիմանում են Ազրբէջանի իշխանութեան հաստատմանը այնտեղ»:

---

*) Այդ ժամանակները Ազրբէջանը ապրում էր զօր. Դենիկինի կամաւորական բանակի սպառնալիքի տակ: